ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 165 – Ա **27 հուլիսի 2018թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 38 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի «Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի հունիսի 17-ի N 52–Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 38–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հուլիսի 19-ի N 140 – Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի կանոնադրության 1-ին գլխի համաձայն ստեղծել գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝

Զարոյան Վահան	– ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, **նախագահ**
Պողոսյան Անուշ	– մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Գալոյան Մամիկոն	- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ
Մնացականյան Վարդանուշ	– մարզպետարանի աշխատակազմի ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ
Շահբազյան Հասմիկ	- մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ
Սաֆարյան Համբարձում	- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ

Խաչատրյան Սուրիկ	– մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ
Հովհաննիսյան Նորիկ	- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, **քարտուղար**
Կարապետյան Տիգրան	- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ
Խլղաթյան Խոսրով	- «Գեղամա աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր /համաձայնությամբ/
Գևորգյան Անահիտ	- «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ նախագահ /համաձայնությամբ/
Մոմչյան Կարինե	- «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ նախագահ /համաձայնությամբ/».

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ի. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ